նոր՝ փոխանակ, 'ի հնումն 'ի դրան Տաճարին Սողոմոնի եղեալ խորհրդական հրոյն և ջրոյն՝ հուրն հաւատոյ 'ի սիրտս որդւոց իւրոց ջինջ տպաւորութեամբ վառ և բորբոքելով՝ տեսանիցէ 'ի միտս նոցա զգահն իմաստութեան և լուսաւորութեան անաղօտ և անստուեր լուսով լուսափայլեալ և պայծառացեալ: Սակայն նոքա, որդիք իւր, իւկարեն զարգացուցանել յինքեանս զանթառամն լուսաւորութիւն և զպանծալի փառս ուսման և գիտութեան, եթէ ոչ, դարձեալ՝ հովանաւորութեամբ և շնորհիւ դոյն իսկ Մօրն բարեխնամի, որոյ փառքն նոյնպէս զարդանալոց է 'ի նոսա փոխադարձաբար՝ յիւրեալ ընկալեալ երախտացն ազդեցութեամբ. վասն զի՝ նա աւանիկ, որդւոց նորին համախոս և միակամ խնդրուածքն բարձրանան առ Տէր ''Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահեա և զերկրպագուս Անուանդ քում պահեա 'ի խաղաղութեան'':

Եւ Դուք, ո՛ Առաքելապատիւ և Վեհափառ Հայրապետ, փոխանորդ և Պատկեր անախտ փեսային Քրիստոսի. Ահա այսօր փառաւորի Եկեղեցիս սուրբ, փառօք Վեհափառութեան Ձերոյ և արժանաժառանգ Գահակալութեամբ Ձերով, որով՝ պանծացուցանէք զփառս և զպատիւ նորին: Եւ ահա, տեսանելով զՁեզ հետեւող մեծագործութեանց և շաւղաց սրբոց Հայրապետացն իւրոց Գրիգորի Լուսաւորչին, Մեծին Ներսիսի և Սահակայ Պարթեւի, և այլոց նմանեաց հօրց երջանկաց՝ բարձր 'ի գլուխ պանծայ անթերի և լիալիր ուրախութեամբ. և որդիք Վեհիդ Դասք Սրբազան հոգեորականաց և բարեպաշտ աշխարհականաց, ահա՛ խնդրեն զսուրբ Հայրապետական Ձեր զօրհնութիւն, և ընդ նմին՝ մեր ուղղեն զաղօթս և զմաղթանս առ Բարձրեալն Աստուած, վասն երջանկութեան և երկայնութեան կենաց Սրբազնագոյն Քահանայապետիդ, 'ի մխիթարութիւն ընդհանրութեան Ազգիս Հայոց և 'ի պարծանս Առաքելական Կաթողիկէ Եկեղեցւոյս մերոյ սրբոյ. ամէն:

Եղիայ Աբեղայ Ջալալեանց

Ի 22-ն յունիսի 1869:

# ԱԶԳԱՅԻՆ

## ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Աթոռոյս Ժառանգաւորաց Ուսումնարանին հարցաքննութիւնը մայիս 26-էն սկսելով մինչև յունիս 15 աւարտեցաւ: Յիշեալ հանդիսին ներկայ և քննիչներն էին սուրբ Աթոռոյս բարձրաստիճան և գիտնական միաբանները, Արմաշու Գերապատիւ Վանահայրը և Պանտրմայու Գերապատիւ Առաջնորդը:

Սորա քննութեան պատկերէն կ'երևի, որ աշակերտք ըստ բաւականին նա և նոր յաւելցած մի քանի տարւոյց մէջ ոչ սակաւ յառաջադիմութիւն ցուցած են:

Համեմատութեամբ անցեալ տարիներու՝ այժմ Ուսումնարանը կարևոր տարկաններով զարգացած է, և աշակերտաց ու դաստիարակաց փոխադարձ ջանքերը կը պատեն ինչպէս Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, նոյնպէս սիրելի Ազգիս իղձերը: Սակայն այսուամենայնիւ կրկին պէտք է խոստովանիլ, որ տակաւին կան բաւական տարկայից պակասութիւններ, որք և ս շնորհիւ Վեհափառ Կաթողիկոսի օր աւուր կը լրանան, մանաւանդ երբ նոր Ուսումնարանին շինութիւնը կ'աւարտի:

# ՊԱՏԿԵՐ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ
## Ժառանգաւորաց ուսումնարանի սուրբ Աթոռոյս
## ԷՋՄԻԱԾՆԻ.

| 5 Քաջագոյն, 4 Քաջ, 3 Լաւ, 2 Միջակ, 1 Վատ. | Կրօնագիտութիւն | Մայր. Պատմութիւն | Հայկաբանութիւն | Ազգային պատմութ. | Ընդ. Պատմութիւն | Աշխարհագրութիւն | Ռուսերէն լեզու | Թուաբանութիւն | Գաղղիերէն լեզու | Նկարչութիւն | Երգեցողութիւն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Բ. ԴԱՍԱՏՈՒՆ** | | | | | | | | | | | |
| Զոհրաբ Տէր Սարգսեան | 4 | 5 | 5 | 4 | 5 | 4 | 3 | 4 | 3 | 4 | 5 |
| Ստեփաննոս Յակոբեան | 4 | 5 | 5 | 4 | 5 | 4 | 3 | 4 | 3 | 4 | 3 |
| Երանոս Գէորգեան | 4 | 5 | 5 | 4 | 5 | 4 | 3 | 3 | 4 | 5 | 4 |
| Կարապետ Գրիգորեան | 4 | 5 | 4 | 4 | 5 | 4 | 3 | 4 | 5 | 4 | 3 |
| Վարդան Տէր Վարդանեանց | 3 | 5 | 4 | 3 | 5 | 5 | 4 | 5 | 5 | 4 | 3 |
| Մկրտիչ Յովակիմեան | 3 | 5 | 4 | 2 | 4 | 3 | 2 | 3 | 2 | 3 | 4 |
| Աւետիս Մելիտոսեան | 3 | 5 | 4 | 2 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 3 |
| Ենովք Մովսիսեան | 3 | 4 | 4 | 2 | 4 | 4 | 3 | 4 | 4 | 3 | 2 |
| Մարտիրոս Տէր Դաւթեան | 3 | 4 | 4 | 2 | 4 | 4 | 2 | 4 | 3 | 3 | 2 |
| Արշակ Մկրտչեան | 4 | 4 | 3 | 2 | 2 | 3 | 2 | 2 | 3 | 3 | 3 |
| Յովհաննէս Գրիգորեան | 3 | 4 | 3 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 2 | 3 | 2 |
| Սիմէօն Ալէքսանեան | 3 | 4 | 3 | 2 | 3 | 3 | 1 | 3 | 3 | 2 | 2 |
| Մկրտիչ Միրզայէլեան | 3 | 4 | 3 | 2 | 3 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 |
| Դանիէլ Տէր Պետրոսեան | 2 | 3 | 4 | 2 | 3 | 3 | 1 | 4 | 2 | 2 | 2 |
| Համբարձում Գէորգեան | 3 | 3 | 2 | 2 | 3 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 |
| Դաւիթ Սատունեանց | 2 | 4 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 3 | 3 | 2 | 2 |
| **Ա. ԴԱՍԱՏՈՒՆ** | | | | | | | | | | | |
| Մակար Գրիգորեան | 3 | 3 | 3 | 2 | | 2 | 2 | 4 | 4 | 3 | |
| Մատաթիայ Ասլանեան | 3 | 3 | 3 | 2 | | 4 | 3 | 4 | 3 | 4 | |
| Սահակ Գէորգեան | 3 | 3 | 3 | 2 | | 4 | 2 | 3 | 4 | 3 | |
| Ալէքսան Բէկլարեան | 3 | 3 | 3 | 2 | | 3 | 2 | 2 | 3 | 2 | |
| Վարդան Մարտիրոսեան | 3 | 3 | 4 | 2 | | 2 | 2 | 3 | 3 | 2 | |
| Բաղդասար Մելքոնեան | 3 | 3 | 4 | 2 | | 3 | 2 | 4 | 3 | 3 | |
| Եփրեմ Գուլամեանց | 3 | 3 | 4 | 3 | | 4 | 3 | 3 | 3 | 3 | |
| Յովհաննէս Գրիգորեան | 3 | 3 | 3 | 2 | | 3 | 1 | 4 | 2 | 2 | |
| Գրիգոր Տէր Ստեփաննոսեան | 3 | 3 | 2 | | | 2 | 2 | 3 | 2 | 2 | |
| Երուանդ Պօղոսեան | 4 | 4 | 2 | | | 1 | 1 | 2 | 1 | 2 | |
| Գրիգոր Անդրէասեան | 3 | 3 | 2 | | | 1 | 1 | 2 | 1 | 2 | |
| Մուշեղ Մուշեղեան | 3 | 3 | 2 | | | 1 | 1 | 2 | 1 | 1 | |
| Խաչատուր Տէր Յովհաննէսեան | 3 | 3 | 3 | | | 2 | 2 | 2 | 2 | 2 | |
| Մելքիսեդէկ Խաչատրեան | 3 | 3 | 3 | | | 2 | 1 | 3 | 2 | 2 | |
| Պօղոս Ներսէսեան (հիւանդ է) | | | | | | | | | | | |
| Յովհաննէս Թովմասեան | 3 | 3 | 3 | | | 2 | 1 | 2 | 1 | 1 | |
| Ղազարոս Յովսէփեան | 3 | 3 | 4 | | | 3 | 1 | 2 | 3 | 2 | |
| Նիկողայոս Յովհաննէսեան | 3 | 3 | 3 | | | 2 | 1 | 3 | 2 | 1 | |
| Գէորգ Մելքոնեան | 3 | 3 | 4 | | | 2 | 1 | 4 | 3 | 2 | |
| Յակոբ Ենովքեանց | 2 | 2 | 2 | | | | 1 | 2 | 3 | 2 | |
| Յովսէփ Դաւթեանց | 2 | 2 | 2 | | | | 2 | 3 | 2 | 1 | |

Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեցաւ խաչաձև մի զմրուխտ ադամանդեալ Նշանի շնորհել Կ. Պօլսոյ Պատրիարքական Տեղապահ Գերապատիւ Իգնատիոս Ս. Արք Եպիսկոպոսին յաղագս հաւատարիմ և անձնանուէր ծառայութեանցն Եկեղեցւոյս Հայոց։

---

Նոր-Նախիջևանայ Մարդասիրական Ընկերութեան առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց ներկայացուցած անցեալ 1868 ամի Յայտարարութիւնը և Հաշիւը։

---

## ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

## Տեառն Տեառն Գէորգայ Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

'ի Հոգաբարձուաց Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջևանի

### Յայտարարութիւն

Ըստ Ժ.Ե. յօդուածոյ Սահմանաց Մարդասիրական Ընկերութեան, հաստատելոյ 'ի Սրբութենէ Ձերմէ, պարտք անհրաժեշտ լինելով Հոգաբարձուացս տալ զտարեկան հաշիւ մտից և ելից արդեանց Ընկերութեան յիւրաքանչիւրում ամի, ևս և գործողութեանց եղելոց 'ի տարւոջ, շնորհ կալաք յօթներորդի աւուր ամսեանն ապրիլի տարւոյս ներկայացուցանել տեառն ընդհանուր ժողովոյ պատուական Անդամոց Ընկերութեան զհաշիւ անցելոյ 1868 ամի, պարզելով 'ի նմին մանրամասնաբար զմուտս և զելս արդեանց, զնախապատուութիւնս ամենայն յան-դանց յօդուած Ընկերութեան և Ժառանգաւորաց դպրոցին սրբոյ Խաչի Վանուց քաղաքիս և յիշատակելով կարճօրէն զգործողութեանց եղելոց 'ի նմին տարւոջ 'ի մասին բարւոյն դպրոցին այնորիկ և պայծառաջադիմութենէ, աշակերտաց նորին։

Զօրինաւոր պատճէն բովանդակ հաշւոյն այնորիկ փութացուցեալ մերով ստորագրութեամբ շնորհ ունիմք ամենախոնարհաբար և յարգանօք բարձրագոյն մատուցանել ընդ այսմ Ձերում Աստուածընտիր Վեհափառութեան և յայտ առնել, զի յօրէ բացման Ժառանգաւորաց դպրոցին մինչ ցայս վայր ժամանակի ակն յայտնի տեսանի 'ի միոյ կողմանէ ջանասիրութիւն դաստուաց մանկանց, և 'ի միւսմէ կողմանէ գովելի յառաջադիմութիւն աշակերտաց յուսմունս և 'ի բարեկրթութեան. և յուսալի է անտարակոյս, Վեհափառ Տէր, զի ընդ քաղցր հովանաւորութեամբ Սրբութեան Ձերոյ դպրոցն այն յառաջասցի և աշակերտք նորին զարգասցին յուսմունս բարեկրթութեան։

Եւ քանզի ըստ զօրութեան Ժ.Ը. յօդուածոյ Սահմանաց Ընկերութեան՝ տարեկան հաշիւ գումարաց և գործողութեանց նորին հարկ է տպագրել յօրագիրս վասն ընդհանուր տեղեկութեան, վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմք 'ի Սրբութենէ Ձերմէ, զի բարեհաճեսջիք հրամայել ում հարկն է, հրատարակել զհաշիւ Ընկերութեանս տպագրութեամբ յԱրարատ ամսագրոյն։

Ձերոյն Աստուածարեալ Օծութեան
խոնարհ ծառայք

Խաչատուր քահանայ Զարիֆեանց
Եղիսէ Յակոբեան Պօղոսեանց
Օհան Զուպառեանց
Գարոն Պաթըրեանց
Յովակիմ Խաղիկեան
Միքայէլ Կարապետեանց
Յովհաննէս Սալթիքեանց
Յովհաննէս Պապաճանեան

Համար 18
ի 22 մայիսի 1869 ամի և Ազգ. ՌՅԺԸ.
'ի Նոր-Նախիջևան։